# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

## ՈՐՈՇՈՒՄ

«03» հուլիսի 2026թ. N ՄՈ/376-Ա

ք. Արմավիր

**«ԱՐԱՔՍԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՍՈՒՐԻԿ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ և 164-րդ հոդվածներով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Սուրիկ Նավասարդյանի 2026 թվականի հուլիսի 1-ի դիմումը.

որոշում եմ՝

1. «Արաքսի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Սուրիկ Նավասարդյանին տրամադրել ամենամյա հերթական երկարացված արձակուրդ՝ 2026 թվականի հուլիսի 10-ից օգոստոսի 13-ը ներառյալ՝ 25 աշխատանքային օր տևողությամբ:
2. Սուրիկ Նավասարդյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Արաքսի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Արաքսի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալ Գայանե Ստեփանյանին:
3. «Արաքսի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալ Գայանե Ստեփանյանի աշխատավարձի վճարումը 2026 թվականի հուլիսի 10-ից օգոստոսի 13-ը ներառյալ իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:
4. Սուրիկ Նավասարդյանին աշխատանքի մեջ համարել 2026 թվականի օգոստոսի 14-ից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Восстановимая подпись

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: KHACHATRYAN VAHRAM 2902840179 Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ